ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 նոյեմբերի 2024 թվականի N 1815 - Ն

ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 0103 92 ԾԱԾԿԱԳՐԻՆ ԴԱՍՎՈՂ ԸՆՏԱՆԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԵՆԴԱՆԻ ԽՈԶԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՔԱՆԱԿԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետը և «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 29-րդ և 47-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Սահմանել՝

1) ժամանակավոր քանակական սահմանափակում ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 0103 92 ծածկագրին դասվող 50 կգ կամ ավելի զանգվածով՝ ընտանի տեսակների կենդանի խոզերի (այսուհետ՝ ապրանք)՝ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծման նկատմամբ, բացառությամբ առնվազն մեկ ծին ունեցող խոզամայրերի՝ 160 կգ-ից ոչ պակաս զանգվածով (ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 0103 92 110 0 ծածկագիր), ոչ ավելի, քան 25,0 հազար հատ քանակով՝ 6 ամիս ժամկետով.

2) որ սույն որոշմամբ նախատեսված ծավալով ապրանքի ներմուծման ժամանակավոր քանակական սահմանափակումը տարածվում է «Բացթողում՝ ներքին սպառման համար» կամ փոխադարձ առևտրով «Մաքսային տարանցում»

մաքսային ընթացակարգերով Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող ապրանքների նկատմամբ:

2. Սահմանել Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեին լիազոր մարմին՝ սույն որոշման կիրարկման իմաստով:

3. Հաստատել ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 0103 92 ծածկագրին դասվող ընտանի տեսակների կենդանի խոզերի՝ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծման ընթացակարգը՝ համաձայն հավելվածի:

4. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան 3 օրացուցային օր առաջ ծանուցել Եվրասիական տնտեսական հանձնաժողովին սույն որոշման 1-ին կետով սահմանված ապրանքների ներմուծման դեպքում ոչ սակագնային կարգավորման միջոցների ժամանակավոր կիրառման մասին:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից և գործում է 6 ամիս ժամկետով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

21.11.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ